

Սիր օրինակ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ CPS-01-01-18 /ԵԶ-ՄԱԾՁԲ-18/4-5/

ԿՈՍԵՐՑԻՈՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան

29 նոյեմբեր 2017

«ՀԱՅՓՈՍ» ՓԲԸ-ն, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության օրենքներին համաձայն և հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանի, մի կողմից և Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Հաճախորդ), ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Գլուխ 1. Պայմանագրի առարկան

- 1.1 Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Հաճախորդի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Հաճախորդը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով ընդունել մատուցված ծառայությունները և վճարել դրանց համար:
- 1.2 Ընկերությունը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններով Հաճախորդի առաջադրանքով վերջինիս մատուցել հետևյալ ծառայությունները՝
 - 1.2.1 Ուղիղ փոստային ծառայություններ (այսուհետ նաև՝ DM կամ DM Ծառայություններ), որոնց մատուցման կարգը, հիմնական պայմաններն ու ժամկետները սահմանված են սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով.
 - 1.2.2 Բիզնես փոստ ծառայություններ (այսուհետ նաև՝ BM կամ BM Ծառայություններ), որոնց մատուցման կարգը, հիմնական պայմաններն ու ժամկետները սահմանված են սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով.
- 1.3 Սույն պայմանագրով սահմանված դեպքերում, ինչպես նաև Հաճախորդի պատվերի հիման վրա առաքանիների ընդունումը կարող է իրականացվել «Հայփոստ» ՓԲԸ սուբհանդակի միջոցով՝ Հաճախորդի գտնվելու վայրում: Սուբհանդակային ծառայություն պատվիրելու, սուբհանդակի միջոցով առաքանիների հանձնման-ընդունման, ինչպես նաև սուբհանդակային ծառայության այլ պայմանները սահմանված են սույն պայմանագրի հավելված 1-ով:
- 1.4 Հաճախորդն իր հայեցողությամբ սույն պայմանագրի գործողության ընթացքում կարող է պատվիրել, ինչպես սույն պայմանագրի 1.2 կետում նշված բոլոր ծառայությունները այնպես էլ դրանցից որևէ մեկը:
- 1.5 Սույն պայմանագրի շրջանակներում Ընկերությունը հաճախորդին մատուցում է ծրարվորման, ծալման, լոգոտիպի տպագրման, հետադարձ հասցեի տպագրման, ինչպես նաև սույն պայմանագրի հավելված 2-ով սահմանված այլ լրացուցիչ (այսուհետ նաև՝ Օժանդակ) ծառայություններ:
- 1.6 Ընկերությունը, որպես Հայաստանի Հանրապետության փոստային կապի ազգային օպերատոր (նշանակված օպերատոր) սույն պայմանագրի շրջանակներում Հաճախորդից ընդունված առաքանիների առաքման և հանձնման գործընթացները ունիվերսալ փոստային ծառայությունների համար սահմանված կանոններով կազմակերպելու ու իրականացնելու դեպքում առաջնորդվում է փոստային կապի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Գլուխ 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1 Ընկերությունը պարտավոր է.
 - 2.1.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.
 - 2.1.2 Սույն պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդի կողմից ծառայությունների մատուցման վերաբերյալ գրավոր բողոքներ ստանալու դեպքում քննարկել դրանք և գրավոր պատասխան ներկայացնել Հաճախորդին՝ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ.
 - 2.1.3 Հաճախորդի ցանկությամբ պարզաբանումներ ներկայացնել Ծառայությունների մատուցման պայմանների և ժամկետների վերաբերյալ.
 - 2.1.4 Ծառայությունների մատուցման գների փոփոխության դեպքում՝ ապահովել նշված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը Հաճախորդին, սույն պայմանագրով սահմանված կարգով.
 - 2.1.5 Ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում ապահովել համապատասխան փոփոխությունների վերաբերյալ իրազեկումը Հաճախորդին՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով.
 - 2.1.6 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

2.2 Ընկերությունն իրավունք ունի.

- 2.2.1 Պահանջել Հաճախորդից՝ սույն պայմանագրով նրա կողմից ստանձնած վճարման և այլ պարտավորությունների պատշաճ կատարում.
- 2.2.2 Ցանկացած ժամանակ առանց լուծելու սույն պայմանագիրը նախնական ծանուցմամբ միակողմանի, ժամանակավորապես դադարեցնել սույն պայմանագրի որոշ կամ բոլոր պայմանների կատարումը, եթե Հաճախորդը չի կատարում կամ ոչ պատշաճ կերպով է կատարում սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ընդունման և դրանց դիմաց վճարման իր պարտավորությունները: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում Ընկերությունն իր ծանուցմամբ սահմանում է այն ժամկետը, որի ընթացքում Հաճախորդը պարտավոր է վերացնել իր կողմից թույլ տրված պայմանագրի պայմանների խախտումները: Սույն ենթակետով սահմանված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում Ընկերությունը կարող է պահանջ ներկայացնել հաճախորդի դեմ պահանջելով պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում, կամ լուծել սույն պայմանագիրը և պահանջել Հաճախորդից վնասների հատուցում.
- 2.2.3 Իրացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

2.3 Հաճախորդը պարտավոր է.

- 2.3.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով ընդունել Ընկերության կողմից մատուցված ծառայությունները և վճարել դրանց դիմաց՝ ծառայությունների գներին համապատասխան.
- 2.3.2 Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների որակի կամ այլ պայմանների վերաբերյալ բողոքներ ունենալու դեպքում անհապաղ տեղեկացնել դրանց մասին Ընկերությանը՝ պահպանելով սույն պայմանագրի 5.3 կետով և 2.3.3 ենթակետով սահմանված պայմանները.
- 2.3.3 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված) տեղեկություն չտարածել (հրապարակային կամ ոչ հրապարակային եղանակով) Ընկերության և վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների որակի և այլ պայմանների վերաբերյալ.
- 2.3.4 Կատարել սույն պայմանագրով սահմանված իր այլ պարտավորությունները:

2.4. Հաճախորդն իրավունք ունի.

- 2.4.1 Պահանջել Ընկերությունից Ծառայությունները մատուցել ժամանակին և պատշաճ կարգով՝ սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.
- 2.4.2 Սահմանված կարգով տեղեկատվություն ստանալ մատուցված ծառայությունների կամ ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ.
- 2.4.3 Սույն պայմանագրով սահմանված կարգով կատարված գնային փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում՝ լուծել սույն պայմանագիրը՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 10-օրյա ժամկետում տեղեկացնելով Ընկերությանը.
- 2.4.4 Ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքերում՝ կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքերում՝ լուծել սույն պայմանագիրը,՝ նախապես կատարելով վերջնահաշվարկ և այդ մասին նախապես 10-օրյա ժամկետում տեղեկացնելով Ընկերությանը.
- 2.4.5 Իրացնել սույն պայմանագրով սահմանված իր այլ իրավունքները:

Գլուխ 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

- 3.1 Սույն պայմանագրով Ընկերության մատուցման ենթակա Ծառայությունների մատուցման ընդհանուր գինը կազմում է 3864000 /երեք միլիոն ութ հարյուր վաթսուներես հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Սույն պայմանագրով նախատեսված DM և BM, ինչպես նաև սուրհանդակային և օժանդակ ծառայությունների գները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ով:
- 3.1.1 2017թ.-ի դեկտեմբեր ամսին մատուցվելիք Ծառայության դիմաց դրամական միջոցների փոխանցումը կատարվում է միանվագ կարգով որպես կանխավճար մինչև 2017թ.-ի դեկտեմբերի 25-ը, որը մարվում է հանձնման-ընդունման արձանագրությամբ՝ մինչև 2018թ.-ի հունվար ամսվա 10-րդ աշխատանքային օրը:
- 3.2 Գների հետագա փոփոխությունների դեպքում Ընկերությունը տեղեկացնում է Հաճախորդին գրավոր ձևով փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 10 (տասն) աշխատանքային օր առաջ:
- 3.3 Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայության համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը Ընկերությունը կազմում և էլեկտրոնային եղանակով Հաճախորդին է ներկայացնում ծառայությունների մատուցման վերաբերյալ փոխադարձ հաշվարկների ակտ (այսուհետ նաև՝ Ակտ), որում նշվում են տվյալ ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունն ու

Ընկերությանը վճարման ենթակա գումարը: Հաճախորդը ստուգում է Ընկերության կողմից ներկայացված Ակտում արտացոլված տվյալները և համապատասխանության դեպքում էլեկտրոնային եղանակով հաստատում է ուղարկում Ընկերությանը:

- 3.4 Հաճախորդի կողմից Ակտի էլեկտրոնային հաստատումն ստանալուց հետո Ընկերությունը դուրս է գրում հարկային հաշիվ, որն ուղարկվում է Հաճախորդի հաստատմանը: Ընկերությունը Հաճախորդին է ներկայացնում նաև սույն գլխով սահմանված փոխադարձ հաշվարկների ակտի փաստաթղթային տարբերակը, որը Հաճախորդը հաստատում և հետ է վերադարձնում Ընկերությանը հաստատված հարկային հաշվի հետ միասին:
- 3.5 Հարկային հաշիվը երկկողմանի հաստատվելուց (ստորագրվելուց կնքվելուց կամ էլեկտրոնային էլեկտրոնային եղանակով հաստատվելուց) հետո Հաճախորդը երկու աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-րդ աշխատանքային օրը՝ պարտավորվում է Ընկերության՝ սույն պայմանագրով սահմանված բանկային հաշվին փոխանցել հարկային հաշվում նշված մատուցված ծառայությունների արժեքը:
- 3.6 Ընկերության կողմից ներկայացված փոխադարձ հաշվարկների ակտում և հարկային հաշվում ներառված տվյալների հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իր առարկությունները, որոնք կողմերի կողմից քննարկվում և պարզաբանվում են երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Գլուխ 4. Կողմերի պատասխանատվությունը

- 4.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 4.2 Ընկերությունը պատասխանատվություն չի կրում, եթե հասցեատիրոջը փոստային առաքանիքները չեն առաքվել ոչ ստույգ և/կամ ոչ լիարժեք առաքման հասցեի, հասցեի փոփոխության, ինչպես նաև հասցեատիրոջ բացակայության կամ Ընկերությունից անկախ այլ պատճառով: Փոստային առաքանու վնասվելու կամ կորստի դեպքերում Հաճախորդի իրավունքների իրականացումը կատարվում է փոստային կապի ծառայությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
- 4.3 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Ընկերությունը՝ սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ընթացքում առաքանիքների ժամանակին չհանձնման համար պատասխանատվություն չի կրում, եթե տեղի է ունեցել Ընկերության արտադրաչահագործական գործընթացի այնպիսի խափանում, որի արդյունքում առաքանիքները հնարավոր չէր ժամանակին հանձնել հասցեատերերին:
- 4.4 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու և ծառայությունների մատուցման պայմանները և ժամկետները խախտելու դեպքում Ընկերությունը կրում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 4.5 Հաճախորդի կողմից սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետի խախտման համար Հաճախորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
- 4.6 Տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները ամբողջությամբ կատարելու պարտավորությունից:

Գլուխ 5. Գաղտնիություն

- 5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում Ընկերությունը պարտավորվում է ապահովել Հաճախորդի փոստային ծառայություններից օգտվելու գաղտնիության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 5.2 Ընկերությունը պարտավորվում է որևէ ձևով երրորդ անձանց չհայտնել և այլ կերպով չհրապարակել Հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները (բնակության հասցե, գտնվելու վայր և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ նշված տվյալներն արդեն իսկ օրինական կարգով հրապարակված են կամ հասանելի են անսահմանափակ թվով անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով նշված տեղեկատվության տրամադրման՝ Ընկերության պարտավորության դեպքերի:

5.3 Հաճախորդը պարտավորվում է չհրապարակել սույն պայմանագրով ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ չճշտված և ոչ հավաստի այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են վնաս հասցնել Ընկերության համբավին և հանգեցնել սպառողների մոտ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ ոչ հավաստի կարծիքի ձևավորմանը:

Գլուխ 6. Վեճերի լուծման կարգը

- 6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով:
- 6.2 Վեճերի և տարաձայնությունների վերաբերյալ բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

Գլուխ 7. Եզրափակիչ դրույթներ

- 7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 01 հունվարի 2018-ից և գործում է մինչև 31-ը դեկտեմբերի 2018թ: Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 2018թ.-ի հունվարի 01-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
- 7.2 Սույն պայմանագրով սահմանված DM, BM և սուրիանդակային ծառայությունների մատուցման պայմաններում փոփոխություններ կատարվելու դեպքում, Ընկերությունը փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է Հաճախորդին գրավոր ձևով՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:
- 7.3 Սույն պայմանագրում պարզաբանումներ, փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 7.4 Սույն պայմանագիրը կարող է լուծվել կողմերից մեկի նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ՝ այդ մասին մյուս կողմին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելու պայմանով:
- 7.5 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող չորս (4) օրինակից: Պայմանագրի երեք (3) օրինակները մնում են Ընկերության մոտ, իսկ մեկ (1) օրինակը տրվում է Հաճախորդին: Սույն պայմանագրով կատարված բոլոր գրավոր ծանուցումներն ընդունելի են կողմերի կողմից, եթե դրանք կատարվել են սույն պայմանագրի Գլուխ 8-ով սահմանված իրավաբանական հասցեներով՝ փոստային ծանուցման կամ առձեռն հանձնման միջոցով, կամ էլեկտրոնային եղանակով՝ հետևյալ էլեկտրոնային փոստի հասցեներով՝

Ընկերություն՝ directmail@haypost.am
Հաճախորդ՝

Սույն պայմանագրի 7-րդ գլխում նշված վավերապայմաններում և սույն պայմանագրի կնքման համար Հաճախորդի ներկայացրած դիմումում և դրան կից փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքերում կողմերը ծանուցում են միմյանց այդ մասին համապատասխան փոփոխությունը կատարվելուց հետո եռօրյա ժամկետում կամ անհապաղ, եթե փոփոխությունը վերաբերում է բանկային վավերապայմաններին և էլեկտրոնային փոստի հասցեին:

- 7.6 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.7 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.9 Սույն պայմանագրով նախատեսված Հաճախողի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

Գլուխ 8. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հաճախող	Ընկերություն
<p>Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի 1 ՀՀ: 900052476216 Երևանի թիվ 2 ՏԳԲ ՀՎՀՀ: 02593108 հեռ.:/010/514-239</p> <p>Աշխատակազմի գնումների վարչության պետ</p> <p>Գ. Զորյան</p> 	<p>«Հայփոստ» ՓԲԸ ք. Երևան 0002, Սարյան 22 ՀՀ: 1930003703150800 «Կոնվերս բանկ» ՓԲԸ ՀՎՀՀ: 02507464 հեռ. : /010/ 514-594/, 514-512</p> <p>Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար</p> <p>Վահագն Ավագյան</p> 

«Հայփոստ» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 29.11.2017 թ-ին կնքված թիվ CPS- 01-01-18 պայմանագրի

ԳԼՈՒԽ 1. «DM» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հաճախորդը ծրարավորման և/կամ առաքման ենթակա նյութերը Ընկերությանն է հանձնում Ընկերության ք. Երևան Տիգրան Մեծի 1-ին փակուղի հասցեում գտնվող Փոստի տեսակավորման և փոխանակման կենտրոնում կամ նյութերի համար պատվիրում է Սուրհանդակի ծառայություն՝ սույն պայմանագրով սահմանված պայմաններով:
2. Առաքման ենթակա նյութերը նեկայացվում են Ընկերությանը հետևյալ ձևերով.
 - 2.1. փակ ծրարավորված և հասցեավորված ձևով,
 - 2.2. փակ ծրարավորված ձևով՝ առանց հասցեների լրացման,
 - 2.3. բաց ձևով:
3. Առաքման ենթակա նյութերը հանձնվում են Պատվերի ձևաթղթի հետ միասին, որում նշում են նյութերի քանակը, ծառայության տեսակը (DM ծառայություն), օժանդակ ծառայությունն ըր և առաքման ձևը (պատվիրված կամ հասարակ ձևակերպում և այլ):
4. Ընկերության համապատասխան իրավասու աշխատակիցը առաքման ենթակա նյութերն ընդունելիս ստուգում է նյութերի քանակի և այլ պայմանների համապատասխանությունը պատվերի ձևաթղթում նշված վավերապայմաններին, որից հետո ստորագրում են պատվերի ձևաթղթի համապատասխան մասում՝ նշելով նյութերի հանձնման ամսաթիվը (օր; ամիս; տարի) և ճշգրիտ ժամը:
5. Ընդունված նյութերն անմիջապես ուղարկվում են մշակման, որի ժամկետը չի կարող գերազանցել նշված տեխնոլոգիական գործընթացի համար պահանջվող ժամկետը՝ բայց ոչ ավելի քան 2 (երկու) աշխատանքային օրը: Մշակման ընթացքում, պատվերի ձևաթղթում նշված լինելու դեպքում, սույն կետով սահմանված ժամկետում Ընկերության կողմից իրականացվում են ծրարավորման, հասցեավորման և սույն պայմանագրով սահմանված այլ օժանդակ ծառայությունները: Առաքանիները կնքվում են «Հասույթը գանձված է» և «DM» կնիքներով:
6. Սույն կետով սահմանված գործընթացներն ավարտելուց հետո ձևավորված առաքանիները փոստի փոխանակման և տեսակավորման կենտրոնից ուղարկվում են առաքման ըստ համապատասխան ուղղությունների:
7. Հայաստանի Հանրապետության տարածքում առաքանիների անցման հսկիչ ժամկետները սահմանվում են .

ա) Երևան քաղաքում՝ փոստի տեսակավորման և փոխանակման կենտրոնից առաքման օր + 1 օր.

բ) ՀՀ մարզեր առաքելու դեպքում՝ փոստի տեսակավորման և փոխանակման կենտրոնից առաքման օր + 3 օր.

8. Արտասահման առաքվող առաքանիների դեպքում առաքանիների անցման ժամկետները հանդիսանում են մոտավոր հաշվարկային ժամկետներ, որոնց շեղումների համար ընկերությունը պատասխանատվություն չի կրում:
9. Արտասահման առաքվող առաքանիների ձևակերպումը, առաքումն ու ծառայության մատուցման համար պահանջվող այլ գործընթացներն, այդ թվում առաքանիների կորստի կամ վնասվելու հետ կապված պահանջների սպասարկումն իրականացվում է ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կանոններին համապատասխան:
10. Առաքանիները հասցեատերերին առաքվում են դրանցում նշված հասցեներով՝ փոստային կանոններով սահմանված կարգով և պայմաններով:
11. ՀՀ տարածքում առաքանիների հանձնման գործընթացը կարգավորվում է սույն հավելվածով և փոստային կանոններով սահմանված կարգով:
12. Համաձայն «Հայփոստ» ՓԲԸ DM նշումով առաքանիները հասցեատերերին առաքման ընթացակարգի՝ առաջին այցելության ժամանակ՝ հասցեատիրոջ բացակայության դեպքում, փոստատարը առաքանիները վերադարձնում է փոստային բաժանմունք՝ հաջորդ օրը առաքելու նպատակով:
13. Հաջորդ օրը հասցեատիրոջ բացակայությունը կրկնվելու դեպքում, փոստատարը հասցեատիրոջը թողնում է ծանուցագիր՝ փոստային բաժանմունք ներկայանալու և առաքանին ստանալու վերաբերյալ, որից հետո առաքանիները վերադարձնում է փոստային բաժանմունք, որտեղ նշված առաքանիները պահվում են 10 (տասը) աշխատանքային օր: Սույն կետում նշված 10-օրյա ժամկետում հասցեատերը (հասցեատիրոջ ներկայացուցիչը) կարող է ներկայանալ փոստային բաժանմունք և ստանալ իր անունով ուղարկված համապատասխան առաքանին:
14. Փոստային բաժանմունքում DM նշումով առաքանիները հասցեատիրոջ բացակայության հիմքով 10 (տաս) օր պահելուց հետո վերադարձվում են «Հայփոստ» ՓԲԸ Հատուկ Հաճախորդների սպասարկման բաժին, որը

փոխանցում է հետադարձ առաքանիները Հաճախորդին՝ կից CN 15 բլանկով՝ չհանձնելու պատճառի մասին համապատասխան նշումով:

15. Չհանձնված բոլոր առաքանիները հետ են վերադարձվում Հաճախորդին կողմերի կողմից համաձայնեցված ժամկետներում, բայց ոչ ուշ, քան սույն պայմանագրի 3-րդ գլխով սահմանված փոխադարձ հաշվարկների ակտի ուղարկումը Հաճախորդին: Հետ վերադարձված առաքանիների վերաբերյալ կազմվում է հետվերադարձի տեղեկանք, որում նշվում են հետվերադարձվող առաքանիների քանակը և հետվերադարձի պատճառները:
16. Սույն պայմանագրի իմաստով առաքանին համարվում է ոչ ընկերության մեղքով չհանձնված, եթե ընկերությունը կատարել է սույն պայմանագրով սահմանված իր պարտականությունները ամբողջ ծավալով, սակայն առաքանին հասցեատիրոջը չի հանձնվել՝

- ա) հասցեի սխալ լինելու պատճառով,
- բ) Հասցեի փոփոխության պատճառով,
- գ) հասցեատիրոջ բացակայության պատճառով,
- դ) ծրարում նշված հասցեում հասցեատիրոջ չբնակվելու կամ չգտնվելու պատճառով,
- ե) Հասցեատիրոջ կողմից առաքանին ստանալուց հրաժարվելու պատճառով:

17. Սույն պայմանագրի իմաստով հասցեն համարվում է ստույգ, եթե առաքանու վրա լրացված հասցեում առկա են հետևյալ չափանիշները ներկայացված հերթականությամբ՝

- ա) Անուն Ազգանուն,
- բ) փողոց, տուն, շենքի համար, բնակարանի համար,
- գ) բնակավայրի անվանում /մարզ, քաղաք, գյուղ/,
- դ) փոստային դասիչ,

18. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաքվող առաքանու դեպքում լրացվում է նաև պետության անվանման դաշտը, ինչպես նաև արտասահման առաքվող առաքանու ձևակերպման համար սահմանված վավերապայմաններ ու ձևաթղթեր:

ԳԼՈՒԽ 2. «BM» ԵՎ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

19. Պատվիրատուն «Հայփոստ» ՓԲԸ Հատուկ Հաճախորդների բաժնի աշխատակցին առնվազն մեկ աշխատանքային օր առաջ հեռախոսազանգով և էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է օրեկան նախատեսված BM ծառայության միջոցով առաքման ենթակա առաքանիների վերաբերյալ:
20. «Հայփոստ» ՓԲԸ Հատուկ Հաճախորդների բաժնի աշխատակիցը Հաճախորդից ընդունված պատվերը հաղորդում է ընկերության սուրհանդակին՝ նշելով Հաճախորդի հասցեն և առաքանիների ընդունման օրն ու ժամը:
21. Սուրհանդակը պարտավոր է ընդունել առաքանիները Պատվիրատուի հասցեում՝ Պատվիրատուի կողմից լրացված «BM» ծառայության պատվերի ընդունման ձևաթղթի հիման վրա: Ձևաթուղթը կազմվում է երկու օրինակից: Ձևաթուղթում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

- ընդունման ամսաթիվ, ամիս, տարեթիվ և ճշգրիտ ժամը,
- Հաճախորդի անվանումը,
- ըստ քաշի առաքանիների քանակը,
- ծառայության տեսակը (պատվիրված կամ հասարակ, պատվիրված տեղեկացումով):


22. Ձևաթուղթը պետք է ստուգվի և ստորագրվի սուրհանդակի և Հաճախորդի լիազոր աշխատակցի կողմից: Ձևաթղթի մեկ օրինակը հանձնվում է Հաճախորդի լիազոր աշխատակցին, մյուս օրինակը սուրհանդակը հանձնում է փոստի փոխանակման և տեսակավորման կենտրոն: Ձևաթղթի էլեկտրոնային տարբերակը Հաճախորդի կողմից ուղարկվում է «Հայփոստ» ՓԲԸ հատուկ հաճախորդների բաժնի հետևյալ էլեկտրոնային հասցեին directmail@haypost.am :

23. Առաքանիների պատվիրված լինելու դեպքում սուրհանդակը պահանջում է հասցեների ցուցակ, որը նույնպես պետք է ստորագրված լինի կազմակերպության լիազոր աշխատակցի կողմից: Սույն կետում նշված հասցեների ցուցակի էլեկտրոնային տարբերակը Հաճախորդի կողմից ուղարկվում է «Հայփոստ» ՓԲԸ հատուկ հաճախորդների բաժնի հետևյալ էլեկտրոնային հասցեին directmail@haypost.am:

- 24. Պատվերը ընդունելուց հետո սուրհանդակը ընդունված առաքանիներն ըստ ձևաթղթի և ցուցակի հանձնում է «Հայփոստ» ՓԲԸ Փոստի փոխամասկման և տեսակավորման կենտրոն, որտեղ առաքանիները կնքվում են «Հասույթը գանձված է» և «BM» կնիքներով:
- 25. BM նշումով ծառայությունների մատուցման դեպքում առաքանիների մշակման, առաքման, հասցեատերերին հանձնման և հետվերադարձի գործընթացները կարգավորվում են սույն հավելվածի Գլուխ 1-ով սահմանված կարգով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 26. Մույն հավելվածով սահմանված համապատասխան ձևաթղթերը Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է էլեկտրոնային եղանակով՝ սույն պայմանագիրը կնքելուց հետո մինչև երկու աշխատանքային օրվա ընթացքում:
- 27. Հաճախորդը սույն պայմանագրով սահմանված սուրհանդակային ծառայություններ կարող է պատվիրել նաև «DM» ծառայությունների շրջանակում, որի դեպքում սույն հավելվածի 2-րդ գլխով սահմանված կարգով իրականացվում են սուրհանդակի միջոցով «DM» առաքանիների ընդունման գործընթացները:
- 28. «DM» և «BM» ծառայությունների մատուցման շրջանակներում արտասահման առաքվող առաքանի Հաճախորդից ընդունելու դեպքում նման առաքանու ձևակերպման մշակման և առաքման գինը հաշվարկվում է արտասահմանյան համապատասխան երկիր տվյալ քաշի առաքանու առաքման համար սահմանված սակագնին գումարած սույն պայմանագրով սահմանված օժանդակ և սուրհանդակային ծառայությունների գինը:

Հաճախորդ	Ընկերություն
<p>Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի 1 ՀՀ: 900052476216 Երևանի թիվ 2 ՏԳԲ ՀՎՀՀ: 02593108 հեռ.:/010/514-239</p> <p>Աշխատակազմի գնումների վարչության պետ</p> <p>----- Գ.Չիրյան</p>	<p>«Հայփոստ» ՓԲԸ ք. Երևան 0002, Մարյան 22 ՀՀ: 1930003703150800 «Կոմվերս քանկ» ՓԲԸ ՀՎՀՀ: 02507464 հեռ. : /010/ 514-594/, 514-512</p> <p>Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար</p> <p>----- Հայկ Ավագյան</p> 

«Հայփոստ» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 29.11.2017 թ-ին կնքված թիվ CPS- 01-01-18 պայմանագրի

ԿՈՍՏՐՑԻՈՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Աղյուսակ 1

	Օժանդակ ծառայությունների տեսակներն ու գները	Յուրաքանչյուր առաքանու համար օժանդակ ծառայության գինը ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ
1.1	Ավտոմատացված ծախում Թղթի վրա նամակն այնպես է գրվում, որ հարմար լինի այն ուղարկել	7
1.2	Ավտոմատացված ծրարավորում C65 ձևաչափի ծրարով Թղթի ներդրում ծրարների մեջ, դրանց կնքում, ինչպես նաև հնարավոր է մի քանի թերթերի ծախում և ներդրում	10
1.3	Յուրաքանչյուր լրացուցիչ ներդրանք Ծրարը կարող է պարունակել մեկից ավելի թերթեր	5
1.5	Լոգոտիպի տպագրում Առաքանու վրա ուղարկող ընկերության լոգոյի տպագրում	10
1.6	Հետադարձ հասցեի տպագրում Առաքանու վրա ուղարկող ընկերության հասցեի տպագրում ծրարի վերևի ծախ անկյունում	5
1.7	Ստացողի հասցեի տպագրում Առաքանու վրա ստացող ընկերության հասցեի տպագրում ծրարի ներքևի աջ անկյունում	5
1.8	Ծանուցագիր CN 07 Ուղարկողը ստանում է առաքանու առաքումը հավաստող գրավոր հաստատում /առաքվել է , ետ է ուղարկվում/	200
1.9	C65/114*229/ Ծրարի արժեք	30
1.10	"Պատվիրված" ձևակերպում	40
1.11	Հայփոստի հաճախորդների տվյալների շտեմարանից հասցեների տեսակավորում և տրամադրում	15

Աղյուսակ 2

	DM» ծառայության գները 20 գրամը գերազանցող քաշ ունեցող առաքանի ընդունելու դեպքում ավել յուրաքանչյուր մինչև 20 գրամ ավել քաշի համար սույն աղյուսակով սահմանված գներին գումարվում է 20 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Սահմանված գները գործում են ներհանրապետական առաքումների համար:	Յուրաքանչյուր Մինչև 20 գրամանոց առաքանու «DM» ծառայության գները ՀՀ դրամով, առանց ԱԱՀ
2.1	Մինչև 100 հատ	125
2.2	101-500 հատ	120
2.3	501-1000 հատ	115
2.4	1001-3000 հատ	110
2.5	3001-5000 հատ	105
2.6	5001-10000 հատ	100
2.7	10000 և ավելի հատ	95
1.4		20

Աղյուսակ 3

BM Ծառայությունների գները	Յուրաքանչյուր առաքանու գինը ըստ քաշի ՀՀ դրամ առանց ԱԱՀ
մինչև 20 գր.	79
20 գր.-100 գր.	150
100 գր.-250 գր.	300
250 գր. - 500 գր.	583
500 գր. -1000 գր.	1000
1000 գր. - 2000 գր.	1500

Աղյուսակ 4

Մուրհանդակային ծառայության	Գինը ՀՀ դրամով, առանց ԱԱՀ
Մուրհանդակի յուրաքանչյուր այցի արժեքը մինչև 2 կգ ընդհանուր քաշով առաքանի (առաքանիներ) ընդունելու համար	416,67
Մուրհանդակի յուրաքանչյուր այցի արժեքը 2 կգ.-ը գերազանցող յուրաքանչյուր մինչև 2կգ. առաքանի (առաքանիներ) ընդունելու համար	416,67

Հաճախորդ	Ընկերություն
<p>Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտի 1 ՀՀ: 900052476216 Երևանի քիվ 2 ՏԳԲ ՀՎՀՀ: 02593108 հեռ.:/010/514-239</p> <p>Աշխատակազմի գործադիր վարչության պետ _____ Գ. Չիրյան</p> 	<p>«Հայփոստ» ՓԲԸ ք. Երևան 0002, Սարյան 22 ՀՀ: 1930003703150800 «Կոմվերս բանկ» ՓԲԸ ՀՎՀՀ: 02507464 հեռ. : /010/ 514-594/ 514-512</p> <p>Գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար _____ Հայկ Ավետյան</p> 